# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

# ՈՐՈՇՈՒՄ

« 9 » դեկտեմբերի 2025 թվականի N: 720 - Ա ք.Գյումրի

ՎԱՆԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 10-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմամբ հաստատված «Գործուղման մեկնած աշխատողների գործուղման ծախսերի չափերի հաշվարկման և հատուցման վճարման կարգի» 3-րդ և 7-րդ կետերի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի խորհրդական Վանիկ Մարտիրոսյանի 2025 թվականի դեկտեմբերի 8-ի զեկուցագիրը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի խորհրդական Վանիկ Մարտիրոսյանին 2025 թվականի դեկտեմբերի 10-ին գործուղել քաղաք Երևան, Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի ենթակայության Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Աշոցքի միջնակարգ դպրոց», «Մեծ Մանթաշի միջնակարգ դպրոց», «Ախուրյանի թիվ 2 հիմնական դպրոց» և «Առափիի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենների հավակնորդների զարգացման ծրագրերի փորձաքննության ներկայացման և ընտրության համար Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2023 թվականի դեկտեմբերի 14-ի N:1653-Ա հրամանով ձևավորված մասնագիտական հանձնաժողովի աշխատանքներին մասնակցելու նպատակով:

2. Գործուղման տևողությունը մեկ օր՝ 2025 թվականի դեկտեմբերի 10-ին:

Դ. ԱՌՈՒՇԱՆՅԱՆ

*Իսկականի հետ ճիշտ է՝*